ԳԼՈՒԽ ԻԳ.

Գործ Սալահատինի։ Խաղալ Ֆրէտերիկոսի Կայսեր յարեւելս։ Թուղթ Գրիգորի Կաթուղիկոսին Հայոց առ Սալահատին։

ՍԱԼԱՀԱՏԻՆ կամեցեալ խոպառ խափանել զպաշտամունս քրիստոնէից՝ եւ աւերել զամենայն զանգակատունս եկեղեցեացն Երուսաղէմի, ընդ որս եւ զմեծ զանգակատունն՝ առ դրան տաճարին Ս. Յարութեան, որոյ աւերակն էանց յետոյ 'ի ձեռս Յունաց, և զանգակոն խորտակել։ Արտաքսեաց զբովանդակ Լատին կղերս 'ի վանաց Սիօնի և 'ի Ս. Տեղեաց, և յԵրուսաղէմէ իսկ հանդերձ ժողովրդովք նոցին։ Լատին կղերք սկիզբն առին բնակելոյ յԵրուսաղէմ հրամանաւ Ֆաթիմեան Սուլթանաց (1048), ուր առաւել եւս եդին հաստատութիւն զկնի տիրելոյ քաղաքին սրբոյ Կոնդոսղէ առաջին թագաւորին Խաչակրաց։ Սակայն պատմիչք Արաբացւոց ասեն՝ թէ Սալահատին արձակեաց զամենայն դերիս յիւրաքանչիւր աշխարհ իւր. եւ թէ փախստականքն հասեալ յԵւրոպա, առ 'ի գրգռել զժողովուրդն, նկարեցին զպատկեր Քրիստոսի եւ առ ընթեր նմին զՄեհեմմէտ դաւաղան 'ի ձեռին, որ սպառնայր հարկանել զՔրիստոս, և նա խուսէր յերեսաց նորա։

Եւ յետ այնորիկ առաքեաց զՄէլիք Ադիտալ և զՄէլիք Մուզաֆֆէր 'ի Պաղեստինս, և ինքն նստէր յԵրուսաղէմ տիրել ճնացեալ ամրոցաց. եւ երկուցեալ 'ի Գոնրատոս Մարքիզէն ամրացոյց զբերդն, հատեալ խրամ լայն շուրջանակի, թողլով կարի անձուկ զմուտս նորին։ Ապաքէն գիտէր Սալահատին թէ քանի՞ սիրելի և պատուական է Երուսաղէմ յաչս քրիստոնէից և այսպիսի յաջողութիւնք բաղդի՝ անտարակոյս ունէր գրգռել ընդդէմ իւր զհամայն Եւրոպա դիմել 'ի զէն. նմին իրի փութաց մեկնիլ 'ի քաղաքէն սրբոյ 'ի Պաղեստինս, և նախ քան զժամանել նոցին, տիրել ճնացեալ ամրոցաց Ասորեաց, և սահմանել պատշաճաւոր բանակեալ զօրաց իւրոց. զի 'ի սմին ժա-